

Ա Ր Յ Ա Խ -
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ՆՈՐ ԶՈՀԵՐ



Այլեւս ընթացիկ երեւոյթ դարձած է զոհերու մասին խօսիլ: Օր չանցնիր որ նոր մեռեալներ ու վիրաւորներ չունենանք: Օգոստոս 25-ին մարտերը շարունակուած են Մարտունիի շրջանը: Չորս ուամբ ինկած է Մուշկապ գիւղի վրայ, ուր մէկ մեռեալ եւ մէկ վիրաւոր կայ: Խումբեր ինկած են նաեւ Մաճկարաչէնի վրայ եւ հոն 8 մեռեալ կայ եւ 10 վիրաւոր:

Ինչպէս ըսած էինք երէկ, Մարտակերտի շրջանի գիւղերը ձեռքէ ձեռք կ'անցնին եւ Օգոստոս 26-ին, Դրմբոն Հայերու կողմէ վերադրուած էր:

Կապանի վրայ ալ ուամբեր կ'իյնան միշտ:



Թուրքիոյ երեք հողինոց պատուիրակութիւնը որ Երեւան էր, Օգոստոս 26-ին Անդարա կը վերադառնար: Տեսակցութիւններ տեղի ունեցած էին Արտաքին փոխ - նախարար՝ Արման Կիրակոսեանի եւ գլխաւորարար նախարահի խորհրդական՝ Ժիրայր Լիպարիտեանի հետ:



ԺԱՆՏԱԽՏԻ ՀԱՄԱՃԱՐԱԿ
ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ
ԶՕՐԻՒՆ ՄԷԶ

122-ի ինքնապաշտպաններուն գերի յանձնուած են աղբրեջանցի Վաղիֆ Աղիզով եւ 4-րդ բանակէն վարձկան զինուոր Եղենի Կոստանդինով. անոնք իրենց փախուստին պատճառ ցոյց տուած են ժամտախտի համաճարակը որ կը տիրէ աղբրեջանական զօրքին մէջ ու անոր յետագայ տարածումը կանխելու համար Աղբրեջանի Պաշտպանութեան նախարարին հրամանով, հիւանդները անմիջապէս կը գնդակահարուին ու կը թաղուին: Գերիներու վկայութեամբ այդ ճակատադիրը ունեցած են 31 զինուորներ որոնց մասին լուրեր տարածուած են որ իբր թէ անյայտ կորսուած են: Աղիզով ու Կոստանդինով կասկածելով որ իրենք եւս վարակուած են, խոյս տուած են եւ բժշկական օգնութիւն խնդրած Հայերէն:



Ղարաբաղի Նորութիւններ գործակալութեան մէկ թղթակիցին հետ հեռաձայնի ըրոյցի մը ընթացքին Աղբրեջանի ընդգիմադիր Սոցիալ - Դեմոկրատ կուսակցութեան մէկ ղեկավարը յայտնած է թէ Աղբրեջան անյայտադ պէտք է միակողմանի կերպով դադրեցնէ ռազմական գործողութիւնները Ղարաբաղի տարածքին վրայ եւ անտեսական կապ հաստատէ անոր հետ: Ան ըսած է նաեւ թէ Աղբրեջանի ժողովրդավար ուժերը պատրաստ են սերտ կապեր հաստատելու 122-ի ժողովրդավար ուժերուն հետ ու յառաջիկայ օրերուն այդ հարցը կը ներկայացնեն կառավարական մակարդակով: